ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 2 *Общественные науки*

Ա. Աբրահամյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐԻՈԴԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ[1]

Հայոց պատմության պերիոդիզացիայի հարցը հայագիտության չլուծված և վիճելի հարցերից մեկն է։ Նա մինչև այժմ մասնագիտական ուսումնասիրության նյութ չի դարձել։ Հայոց պատմության դասընթացը կազմող հեղինակներից ամեն մեկն առաջնորդվել է իր ցանկացած սկզբունքով և կատարել է իր սեփական պերիոդիզացիան։ Եվ այդ սկզբունքներն այնքան բազմազան են եղել, որ, կարելի է ասել—որքան դասընթաց կա, այնքան էլ սկզբունք։

Հայոց պատմության պերիոդիզացիայի առաջին փորձը, հիշատ է պրիմիտիվ, կատարել է պատմահայր Խորենացին։ Նա իր կազմած Հայոց պատմության դասընթացը բաժանել է երեք հիմնական շրջանների՝ 1. «Ծննդաբանութիւն» («Գիրք առաջին. Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց»), 2. «Միջակ պատմութիւն» («Գիրք երկրորդ. Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց») և 3. «Աւարտաբանութիւն» («Հատած երրորդ. Աւարտաբանութիւն մերոց նախնեաց»)։ Գատմահոր նպատակն է եղել առաջին գրքում շարադրել ծննդաբանությունը «զթագաւորացն և զնախարարականաց ազգաց ի տոհմից, թէ ով յումմէ, և զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց...»։ Երկրորդ գրքում՝ Աղեքսանդր Մեծից մինչև Տրդատ Մեծը («Գրեմ քեզ այժմ,—ասում է նա իր մեկենասին—և որ ինչ առանձին մերոյ աշխարհիս գործք... սկսեալ ի թագաւորութենէն Աղեքսանդրի, մինչև զթագաւորութիւն սրբոյ և քաջի առնն մեծին Տրդատայ»։[2] Եվ երրորդ գրքում՝ ժամանակակից պատմությունը, այսինքն Տրդատ Մեծից մինչև իր ժամանակը, 5-րդ դարը («զի ահա որ ինչ առ մերով ժամանակաւս եղեալ կամ դոյզն ինչ հեռի՝ զրուցեցից քեզ անսխալ...»)։[3]

Խորենացու այս պերիոդիզացիայից մասամբ տարբերվում է 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի պերիոդիզացիան։ Նա հայոց պատմությունը բաժանում է հետևյալ երեք շրջանների՝ 1. վիպասանական շրջան, 2. նրան հաջորդող պատմական շրջան և 3. ժամանակակից շրջան։ *Նա իր պերիոդիզացիայի մասին իր ներածական գլխում հետևյալն է ասում. «Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանստարագրել ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով զրոշմել զվիպասանութիւնս, զիմն յիշատակել զառասպելս, և ի նոյն շարադրելով ասացից զառ ի յապայսն եղելոյ. և ցուցից*

---

[1] Զեկուցված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական սեսիայում 1946 թ. նոյեմբերի 18-ին։ Տպագրվում է մաքերի փոխականության կարգով. Խմբ.

[2] Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 11։

[3] Նույնը, էջ 101։

[4] Նույնը, էջ 257։

համառաւաքիւք զորդեաց ժամանակացս զազետիցս վերաբերութեան զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելովս։[1]

Խորենացու և Սեբեոսի այս պերիոդիզացիան աննշան փոփոխությամբ կրկնվում է նաև միջնադարյան մեր մի քանի այլ պատմագիրների մոտ։

Մ. Չամչյանն իր երեք հատորից կազմված ուեծածավալ Հայոց պատմության դասընթացը բաժանել է վեց գլխավոր շրջանների՝ յուրաքանչյուր հատորի մեջ զետեղելով երկու շրջանների պատմությունը։ Նա յուրաքանչյուր շրջանի համար ժատնացույց է անում հետևյալ բնորոշ իրադարձությունը. «Առաջինն է այն, յորում տիրեալ պայազատեցին Նահապետք հայկազունք՝ կէս մի ազգային տէրութեամբ, և կէս մի արքայական շքով. և ապա կուսակալք։ Երկրորդն է այն, յորում թագաւորեցին Արշակունիք ի սերնդոց Արշակայ Պարթևի։ Երրորդն է այն, յորում իշխեցին մարզպանք պարսից, և ոստիկանք իշխանութեանն հազարացւոց, ևս և նախարարք ի հայոց։ Չորրորդն է այն, յորում թագաւորեալ տիրեցին Բագրատունիք։ Հինգերորդն է այն, յորում զօրացան Ռուբինեանք ի Կիլիկիա, մինչև ի բնաջինջ բարձումն տէրութեան հայոց։ Վեցերորդն է այն, յորում կային և կան ազգ մեր յանիշխանութեանն։»[2]

Գարագաշյանն իր Հայոց քննական պատմության մեջ պերիոդիզացիան կատարում է ընդհանուր ձևով և ըստ աղբյուրների վավերականության բաժանում այն երկու շրջանի—նախնական և պատմական։ Նա այս շրջաններից յուրաքանչյուրի համար գծել է ժամանակագրական հետևյալ շրջանները. «նախնական...ի սկզբանէ մինչև Տիգրան Մեծ (Արշակունի), կամ մինչև 90 նախ քան զԲրիստոս։ Պատմական... զմիջոցն ի Տիգրանայ և այսր, կամ 90-էն նախ քան զԲրիստոս մինչև մեր ժամանակը։»[3]

Պերիոդիզացիայի հարցում ավելի լուրջ վերաբերմունք է ցուցաբերել պրոֆ. Գ. Խալաթյանցը՝ Լազարյան ճեմարանում կարդացած և ապա 1910 թվին հրատարակած „Очерк истории Армении" վերնագիրը կրող իր դասընթացում։ Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիան գծելու հարցում նա հաշվի է առել ինչպես ընդհանուր պատմության մեջ կիրառվող պերիոդիզացիայի ընդհանուր սկզբունքները, այնպես և հայոց պատմության առանձին շրջաններին բնորոշ քաղաքական, սոցիալական և կուլտուրական առանձնահատկությունները։ Պրոֆ. Գ. Խալաթյանցը հայոց պատմությունը բաժանում է երեք շրջանների—հին, միջին և նոր։ Հին շրջանը սկսվում է Հայաստանի նախաբնիկներից և տևում մինչև Արշակունյաց հարստության անկումը (5-րդ դար), միջին շրջանը՝ Արշակունիների անկումից մինչև հայ պետականության անկումը (14-րդ դար), և նորը՝ հայ պետականության անկումից մինչև իր ժամանակները։ Հին շրջանի բնորոշ երևույթը, պրոֆ. Գ. Խալաթյանցի կարծիքով, այդ՝ հայ պետականության կոնսոլիդացիան է, ցրված հայկական շրջաններն իրար միացնելը, ժողովրդի նկարագրի ստեղծումը, և բոնապետության կազմավորումը՝ Արևելքի ոգուն համապատասխան։ Հին և միջին շրջանները սահմանազծող ֆակտորը,

---

[1] Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, աշխատ. Ս. Մալխասյանցի, Երևան 1939 թ., էջ 1։

[2] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Ա. հատոր, Վենետիկ 1784, էջ 30։

[3] Ա. Մ. Գարագաշյան. Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1893 թ., Ա մաս, էջ 1։

նրա կարծիքով, քրիստոնեությունն է հանդիսացել, որը հայ ժողովրդին կտրել է իր անցյալից, ստիպել է երես շուռ տալ Արևելքից և իր համակրանքն ուղղել դեպի Արևմուտք։ Միջին դարերի գերիշխող սկզբունքը, ինչպես Եվրոպայում է, եկեղեցականությունն ու ֆեոդալիզմն է հանդիսացել։ Այս էպոխայում հայ ժողովուրդը վերջնականապես ձևակերպել է իր նկարագիրը։ Զարթնել է նրա ազգային ինքնագիտակցությունը և նա գծել է իր կուլտուրական խնդիրները։ Հայոց պատմության նոր շրջանը զուգադիպում է հայ գաղութների առաջացմանը, ուր սկսել է ծաղկել հայկական ոգեսանը։ Այս շրջանում ավելի ցայտուն ձևով է արտահայտվել ազգային գիտակցությունը, ազգային տենդենցը։ Հայ ժողովուրդը այս շրջանում ձգտել է անկախության՝ ռուսական հովանավորության տակ։ Աստիճանաբար, լուսավորության տարածման զուգընթաց, կրոնն սկսել է կորցնել իր ունեցած բացառիկ դերը։ Սակայն այս շրջանում ևս հայ ժողովուրդը մնացել է որպես արևմտական, ձգտել է դեպի եվրոպական կուլտուրան և միջնորդի դեր կատարել Եվրոպայի ու Ասիայի միջև։[1]

Ինչպես տեսնում ենք, պրոֆ. Գ. Խալաթյանցի պերիոդիզացիայի այս կառուցվածքում, հիմնական շեշտը դրվում է հայոց պատմության քաղաքական և կուլտուրական մոմենտների վրա։

Լեոն հայ ժողովրդի պատմությունը բաժանում է չորս մեծ դարաշրջանների՝ 1. հին պատմություն (սկզբից մինչև 5-րդ դարը), 2. միջին պատմություն (5-րդ դարից մինչև 16-րդ դարը), 3. նոր պատմություն (16-րդ դարից մինչև 1830 թվականը) և 4. ժամանակակից պատմություն (1830 թ. մինչև մեր օրերը)։[2] Սակայն ինչ հիմնական սկզբունքով է առաջնորդվել այսպիսի բաժանման համար, Լեոն ոչինչ չի ասում։ Միայն նրա վերջերս լույս տեսած նոր շրջանի պատմության առաջաբանից երևում է, որ պերիոդիզացիայի հարցերի վրա նա կանգ է առել իր Հայոց պատմության երկրորդ, այսինքն Միջին դարերի պատմության հատորում,[3] որը, դժբախտաբար, չի հրատարակված և գտնվում է ձեռագիր վիճակում։

Սովետական մեր հայագետներից հայոց պատմության պերիոդիզացիայի վրա կանգ են առել պրոֆ. Ա. Սամվելյանը իր «Մտրկությունը հին Հայաստանում» աշխատության մեջ։ Պրոֆ. Ա. Սամվելյանի կարծիքով, «Հայոց պատմության դուռը Հայաստանում բացվում է ֆեոդալական հասարակական կազմով» և «Հայաստանի կամ հայոց ամբողջ պատմությունը մինչև 18-րդ դարը ոչ այլ ինչ է, բայց եթե հայկական ֆեոդալիզմի պատմություն»։[4] Ըստ որում, պրոֆ. Ա. Սամվելյանը Հայաստանում ֆեոդալիզմը բաժանում է երեք հիմնական շրջանների—1. «Հայկական վաղ ֆեոդալիզմ» (VI—I դարերը), 2. «Նախնական ֆեոդալիզմ» (I—XIII դարերը) և 3. «Իշխանական ֆեոդալիզմ» (XIII—XVIII դարերը)։[5]

Ակադ. Հ. Մանանդյանը հայոց պատմության պերիոդիզացիայի հարցով կոնկրետ չի զբաղվել։ Նա միայն իր «Բնական տեսություն հայ ժո-

---

[1] Г. Халатянц, Очерк истории Армении, М.-ва, 1910 г., стр. III—V.

[2] Լեո, Հայոց պատմություն, Ա հատոր, Թիֆլիս 1917 թ., էջ 2։

[3] Լեո, Հայոց պատմություն, Գ. հատոր, Երևան, 1946 թ., էջ 1։

[4] Պրոֆ. Ա. Սամվելյան, Մտրկությունը հին Հայաստանում (տես ՀՍՍՌ Գաս. և գրակ. ինստիտուտի տեղեկագիր, Երևան, 1937, II գիրք, էջ 92)։

[5] Նույնը, էջ 93, 95, 97։

ղովրդի պատմության» աշխատության առաջաբանում հայտնում է, որ իր կազմած հայոց պատմության դասընթացը բաղկացած է լինելու երեք հատորից, որից առաջին հատորն ընդգրկել է «Հայ ժողովրդի հնագույն պատմությունը՝ սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (մեր թվ. 66 թ.)։ Երկրորդ հատորը պարունակելու է իր մեջ հին Հայաստանի պատմությունը Արշակունիների թագավորության հիմնումից մինչև Բագրատունիների թագավորության անկումը (XI դ. մեր թվ. հ.)։ Իսկ երրորդ հատորը ամփոփում է իր մեջ թուրք-թաթարական ժամանակների պատմությունը՝ Սելջուկյան շրջանից մինչև Սեֆյանների հաստատումը Իրանում (XVI դ. մեր թվ. հ.)։[1] Ցուրաքանչյուր հատորի պարունակած նյութը առանձին դարաշրջանի իմաստով է դրված ակադ. Հ. Մանանդյանի մոտ, թե ոչ, այդ դժվար է ասել։ Ի դեպ՝ երեք հատորի պարունակած պատմական այս նույն ժամանակաշրջանը ակադ. Հ. Մանանդյանը հավառոտած շարադրել է իր մի այլ աշխատության մեջ ևս, որ ունի „Краткий обзор истории древней Армении"[2] վերնագիրը։ Այս աշխատության վերնագրից երևում է, որ նա մինչև XV դարը հայոց պատմությունը համարում է ոչ թե հայոց պատմության ամբողջական դասընթաց, այլ միայն հին շրջանի։ /

Եվ, վերջապես, պերիոդիզացիայի հարցի պատմագրությունն ամբողջացնելու համար, անհրաժեշտ ենք համարում բերել նաև մեր միջնակարգ դպրոցների համար կազմված հայ ժողովրդի պատմության ձեռնարկում կատարված պերիոդիզացիան։ Այստեղ հայ ժողովրդի պատմությունը բաժանված է երեք հիմնական շրջանների.—Հին շրջան, որն սկսվում է նախնադարյան համայնական հասարակությունից և հասնում մինչև Արշակունյաց հարստության անկումը։ Միջին դարեր, որն սկսվում է 5-րդ դարի ժողովրդա-ազատագրական շարժումներից և հասնում մինչև 18-րդ դարը (վերջացնում է Աղա Մահմեդ խանի 1795 թվի արշավանքով)։[3] Եվ նոր շրջան, որը սկսվում է 18-րդ դարից և որը պիտի մտնի կազմվող ձեռնարկի երկրորդ հատորի մեջ։ Սակայն այս պերիոդիզացիայի հիմնական սկզբունքը պարզ չէ, ուստի և նա արժանացել է դրախոսողների արդարացի քննադատությանը։ (Տես պրոֆ. Ա. Իոնիսիանի գրախոսականը տպված „Советская книга" ամսագրի 1946 թվի № 6—7-ում և ընկ. Բ. Առաքելյանի գրախոսականը, տպված ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների սերիայի) 1945 թվի № 1—2-ում)։

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի խնդրում պատմագիտության մեջ տարբեր մոտեցումներ են եղել,—ոմանց բաժանման սկզբունքը Հայաստանում գահակալող դինաստիաներն են հանդիսացել, ոմանց սկզբունքը՝ հասարակական հարաբերությունների յուրահատուկ բնույթը, ոմանց մոտ ընդհանուր պատմության մեջ կիրառվող պերիոդիզացիան, ոմանց մոտ՝ սկզբնաղբյուրների վավերականությունը և այլն։

---

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ա. հատոր, Երևան 1946 թ., էջ 6։

[2] *Я. А. Манандян*. Краткий обзор истории древней Армении, Москва 1943 г.

[3] Հայ ժողովրդի պատմություն, ձեռնարկ միջնակարգ դպրոցների համար, Երևան 1943 թ.։

Արդ բուն սկզբունքով մենք պիտի առաջնորդվենք պերիոդիզացիայի խնդրում, որը պիտի լինի միակ ելակետը։

Մարքսիստական պատմագիտությունը պերիոդիզացիայի հարցը, ինչպես հայտնի է, կապում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ։ Համապատասխան ֆորմացիայի հետ կապվում է պատմության այս կամ այն ժամանակաշրջանը։ Ստրկատիրական ֆորմացիան ընդունված է կապել հին, անտիկ շրջանի հետ, ֆեոդալական ֆորմացիան՝ միջին դարերի հետ և կապիտալիստական ֆորմացիան՝ նոր շրջանի հետ։ Էնգելսն իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ, հանրագումարի բերելով իր ուսումնասիրությունը, պարզ նշում է, որ «Ստրկությունը—այդ շահագործման առաջին ձևն է, որ հատուկ էր անտիկ աշխարհին, նրան հետևում են՝ ճորտական իրավունքը միջին դարերում և վարձու աշխատանքը նոր ժամանակում»[1]. Արտադրության եղանակը, ինչպես տեսնում ենք Էնգելսի ընորոշումից, առանձին պերիոդների հիմքն է կազմում։

Պերիոդիզացիայի խնդրում մեզ համար առանձնապես ուզեցուցային կարևոր նշանակություն ունեն ընկ. ընկ. Ստալինի, Կիրովի և Ժդանովի «Դիտողությունները նոր պատմության դասագրքի կոնսպեկտի վերաբերյալ»[2]

Իսկ թե արտադրության ինչ հիմնական եղանակներ գիտե ժարդկային պատմությունը, այս հարցի որոշակի պատասխանը մենք գտնում ենք Համկ(բ) Պարտիայի պատմության համառոտ դասընթացում. «Պատմությանը հայտնի են արտադրական հարաբերությունների հինգ հիմնական տիպեր—նախնադարյան-համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական, սոցիալիստական»։

Մարքսիզմի կլասիկների տված ցուցումների հիման վրա ընդհանուր պատմության պերիոդիզացիան բաժանվում է հետևյալ ձևով։ Հնագույն ժամանակներից մինչև Հռոմի ստրկատիրական հասարակության անկումը (V դար) համարվում է հին շրջան, V դարից մինչև ֆրանսիական ռևոլյուցիան—միջին դարեր և ֆրանսիական ռևոլյուցիայից մինչև նորագույն ժամանակները—նոր շրջան։ Այս սկզբունքներով են կազմված հին պատմության, միջին դարերի և նոր շրջանի մարքսիստական բոլոր դասընթացներն ու ծրագրերը։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընդհանուր պատմության պերիոդիզացիան ելնում է ոչ թե առանձին երկրների այս կամ այն ֆորմացիայի մեջ մտնելու որոշակի թվականից, այլ մի խումբ երկրների զարգացման ընդհանուր աստիճանից։ Այսպես, երբ մենք ասում ենք, որ նոր շրջանի պատմությունն սկսվում է ֆրանսիական ռևոլյուցիայից, դա չի նշանակում, որ եվրոպական բոլոր երկրների ժողովուրդներն այդ նույն ժամանակ գտնվում էին զարգացման հավասար աստիճանի վրա։ Ընդհանուր պատմության պերիոդիզացիան, պարզ է, սահմանագծվում է ընդհանուր ձևով։

---

[1] *Ф. Энгельс*, Происхождение семьи, частной собственности и государства, Москва, 1945 г., стр. 198.

[2] *Տես «Պատմական դիտության ֆրոնտում», Երևան, 1938 թ., էջ 3—8։*

[3] История ВКП(б). Краткий курс. М-ва 1938 г., стр. 119.

Չնայած ընդհանուր պատմության պերիոդիզացիայի հետ կապված հիմնական հարցերը գրեթե լուծվում են պատմագիտության կողմից, և թվում է, որ դյուրին պիտի լինի հշտված այս մեթոդով կատարել նաև հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիան, սակայն, իրականում, մենք հանդիպում ենք մի շարք դժվարությունների։

Առաջին և ամենամեծ դժվարությունն այն է, որ մեզ մոտ դեռ վերջնականապես լուծված չեն հասարակական-տնտեսական ֆորմացիայի հարցերը։—Եղել է մեզ մոտ ստրկություն, թե ոչ։ Եվ եթե եղել է՝ ինչ տևողություն է ունեցել նա։ Ե՞րբ է մեզ մոտ ձևավորվել ֆեոդալիզմը և այլն։ Առանց այս հարցերի վերջնական լուծման, բնական է, դժվար է սահմանագծել նաև ժամանակաշրջանները։

Երկրորդ դժվարությունն այն է, որ մեր ժողովրդի պատմությունը շատ է ձգված դեպի հնության խորքը։ Հայ ժողովուրդը պատմության բեմ է բարձրացել շատ վաղ, այն ժամանակ, երբ կլասիկ Արևելքում մարդկային կուլտուրայի առաջին հիմնաքարերն էին դրվում։ Եվ հենպուն այդ շրջանից հայ ժողովրդի պատմությունը միալար ձգվում է դեպի հունահռոմեական անտիկ շրջանը և անցնում ողջ միջնադարով։ Նա· ունի շուրջ 5000 տարվա հնություն։

Երրորդ գտնվելով Արևելքի և Արևմուտքի մրցակցության ցանցում, Հայաստանն իր երկարձիգ պատմության ընթացքում խոշոր ազդեցություններ է կրել իր հարևաններից։ Հին Արևելքին և անտիկ հասարակությանը հատուկ ձևեր այս կամ այն չափով իրենց արտահայտությունն են գտել նաև Հայաստանում։ Եվ սկզբնաղբյուրների կցկտուր տեղեկությունները դժվար են ենթարկվում ընդհանրացման։

Չորրորդ՝ Հայաստանը իր պատմության ընթացքում հաճախակի է ենթարկվել մեծ ավերումների, որոնք կասեցրել են նրա նորմալ զարգացման ընթացքը և հաճախ մի քանի դար ավելի ետ տարել նրան։[1]

Եվ, վերջապես հինգերորդ, փոքրաթիվ հայ ժողովուրդը բնակություն է հաստատել լեռնոտ և ընդարձակածավալ մի երկրում, ուր հասարակական հարաբերությունները զարգացել են շատ անհամաչափ։ Կտրված փակ պայմանները, հատկապես լեռնային շրջաններում, զգալի չափով նպաստել են հասարակական հարաբերությունների կոնսերվատիզմին։

Մենք, մեր ներկա զեկուցման մեջ, նպատակ չենք դրել լուծել նշված կնճռոտ բոլոր հարցերը։ Դրա համար, բնական է, հարկավոր է երկարատև աշխատանք։ Մենք ցանկանում ենք միայն կանգ առնել սկզբունքային նշանակություն ունեցող և պերիոդիզացիայի հետ կապված մի քանի հարցերի վրա միայն։ Այդ նկատառումով և մենք մեր թեման վերնագրել ենք ոչ թե «Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիան» ընդհանրապես, այլ «Հայոց պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը»։

Առաջին հարցը, որի լուծումը կարևոր է հայոց պատմության պերիոդիզացիայի համար, այդ՝ հայ ժողովրդի պատմության սկզբնավորության հարցն է—որտեղից պիտի սկսել հայոց պատմությունը։ Հայաստանի նախաբնիկների պատմությունը պիտի մտնի՞ հայոց պատմության մեջ, թե

[1] Տես այս մասին Н. Я. Марр, Ани, Ереван, 1989 г., стр. 15.

ոչ։ Թող տարօրինակ չթվա նման հարցադրումը, որովհետև եղել են և կան տեսակետներ, որ հայ ժողովրդի պատմությունը պիտի սկսել հնդեվրոպական արմենների՝ Հայաստանում, իրենց «նոր հայրենիքում հաստատվելուց հետո», VII կամ VI դարերում մեր թվականությունից առաջ։

Հայ ժողովրդի պատմության սկզբնավորությունը արմենների հետ կապելու այս կոնցեպցիան իր անունդն ստանում է հնդեվրոպական ռասայական շկոլայից, որի տիպիկ արտահայտիչը հայագիտության մեջ հանդիսացել է Կոստանյանցը։ Նա իր „История Армении" փոքրիկ աշխատության մեջ հետևյալն է դրում արմենների մասին. «Նրա (արիացիների—Ա. Ա.) հանդես գալը պատմական թատերաբեմում հավասարազոր է բարձր կուլտուրաների հաղթանակին։ Արիացիները տարածվեցին և հռչակ ստացան շնորհիվ իրենց բարձր բնական հատկությունների։ Սրանք արտաքին տեսքով պարթև. դեղեցիկ դիմագծերով, մաշկի բաց գույնով մարդիկ էին, իսկ հոգեկան հատկությամբ՝ խորը գիտակցող իրենց գերազանցությունը տարբել արյուն ունեցող ժողովուրդների համեմատությամբ։ Նրանք անվանում էին իրենց արիացի, որ նշանակում է բարեշնորհ...։ Նրանց լեղուն աչքի է ընկնում ճկունությամբ, բարեհնչունությամբ և հարստությամբ։ Այդ ռասայի բնորոշ գծերն են ընդհանրապես՝ հոգեկան բարեշնորհությունը, անխորտակելի կամքը, համառությունը, հավերժ ձգտումը դեպի ինքնակատարելագործում և առաջադիմություն»։[1]

Միգրացիոն ռասայական այս դրույթը կտրականապես մերժում ենք։ Մարքսիստական պատմագրության կողմից արդեն պարզված է, որ հայ էթնոսը, հիմնականում, կազմված է տեղական ցեղատոհմային միավորումներից, որ Հայաստանը հայ ժողովրդի բնաշխարհն է հանդիսացել, որ Հայաստանի նախաբնիկների կուլտուրան հայ ժողովրդի հին կուլտուրայի սաղմերը հանդիսացան. ուստի և Հայաստանի նախաբնիկների պատմությունը սերտ կերպով կապված է հայ ժողովրդի պատմության հետ և նրա օրգանական մասն է կազմում։

Այս կապակցությամբ հարց է առաջանում՝ չեղան արդյոք Հայաստանում ապրող ցեղատոհմային այնպիսի միավորներ, որոնք հետագայում ասիմիլացիայի ենթարկվեցին մեր հարևան վրաց և այլ ժողովուրդների հետ, ինչպես դրվում է որոշ պատմաբանների կողմից վերջերս։ Անկասկած, եղան։ Էտնոգենեզի պրոցեսը, մեր կարծիքով, ավելի բարդ է, քան մենք այդ կարողանում ենք ըմբռնել։ Հայաստանի տերիտորիայի վրա կազմվել և քայքայվել են մի շարք ցեղատոհմային ֆեդերացիաներ։ Այդ ֆեդերացիաների միջից եղել են և ցեղեր, որոնք դուրս են եկել Հայաստանի սահմաններից ու ձուլվել հարևան ժողովուրդների հետ։ Եղել են, անկասկած, և դրսից եկող ցեղախմբեր։ Սակայն այս ամբողջ պրոցեսի ընթացքում հայ ժողովուրդը, իր հիմնական մասով, կազմակերպվել է որպես տեղական ցեղատոհմային միավորում։

Մեր կարծիքով, Հայաստանի նախաբնիկների պատմությունը պիտի մտնի հայոց պատմության հին շրջանի մեջ և նրա առաջին էջը պիտի կազմի։

---

[1] *К. Костанянц*, История Армении (краткий очерк), М-ва 1911 г., стр. 18—19.

Երկրորդ կարևոր հարցը, որը կապված է հայ ժողովրդի պատմության հին շրջանի հետ, այդ՝ նախնադարյան համայնական հասարակության հարցն է հին Հայաստանում։ Բոլոր ժողովուրդների պատմության արշալույսը, ինչպես նշել է Էնգելսը, բացվում է նախնադարյան համայնական հասարակությամբ։ Այդ նույնը, ֆորմացիաների մասին խոսելիս, նշված է նաև Հայկ(ր) Պարտիայի պատմության հավաստ դասընթացի մեջ։[1] Հայաստանը այս օրինաչափությունից բացառություն չի՞ կազմել արդյոք։ Մեր կարծիքով, ոչ։ Նախնադարյան համայնական հասարակության շրջանից Հայաստանում գտնված էքսպոնատներն այնքան շատ են, որ մենք այժմ հնարավորություն ունենք ոչ միայն խոսել նախնադարյան համայնական հասարակության մասին ընդհանրապես, այլև նրա առանձին շրջանների կուլտուրայի մասին, անգամ պալեոլիթի մասին, որ առաջներում ժխտվում էր (Մորգան և ուրիշները)։ Մեր միջնակարգ դպրոցների համար կազմված ձեռնարկի առավելություններից մեկը, մեր կարծիքով, հենց այն է, որ նա հայոց պատմության առաջին այն դասագրքերից է, որի մեջ հատուկ գլուխ է հատկացված նախնադարյան համայնական հասարակությանը։

Հայոց պատմության համար առաջիկայում կազմվելիք ծրագրերում և դասընթացներում պատշաճ տեղ, անպայման, պիտի հատկացվի նախնադարյան համայնական հասարակությանը։

Հայոց պատմության հին շրջանի հետ կապված երրորդ կարևոր հարցը— այդ՝ Ուրարտուի և Արտաշեսյան հարստության շրջանում գոյություն ունեցող հասարակա-տնտեսական հարաբերությունների հարցն է։ Ինչպես հայտնի է, ընդհանուր պատմության մեջ ստրկատիրական շրջանը մտնում է պատմության հին շրջանի մեջ։ Ելնելով այդ սկզբունքից, մենք կարող ենք արդյոք Ուրարտական և Արտաշեսյան շրջանները մտցնել հին շրջանի մեջ, թե ոչ։ Այս հարցը լուծելու համար մեր վստահելի հենարանը գոյություն ունեցող և հրատարակված ուսումնասիրություններն են։

Արևելագետ և ուրարտագետ մասնագետները, ինչպես հայտնի է, Ուրարտուի նկատմամբ ասել են իրենց վճռական խոսքը։ Այսպես, ակադ. Ստրուվեի կարծիքով, ուրարտական հասարակությունը ռազմա-ստրկատիրական հասարակություն էր հանդիսանում։[2] Այդ թեզը համարձակ դրված է հատկապես պրոֆ. Պիոտրովսկու՝ Ստալինյան մրցանակի արժանացած, «Ուրարտուի պատմությունը և կուլտուրան» աշխատության մեջ։

Մեր կարծիքով, անվիճելի է, որ Ուրարտուն պիտի մտնի Հայոց պատմության հին շրջանի մեջ։

Հայագիտության մեջ, սակայն, խիստ վիճելի է Արտաշեսյան հարստության և նրան նախորդող շրջանի հասարակա-տնտեսական ֆորմացիայի հարցը։ Այդ շրջանի վերաբերյալ գոյություն ունի երեք հիմնական տեսակետ — 1. Արտաշեսյան հարստությունը հանդիսացել է ստրկատիրական հասարակություն, 2. Արտաշեսյան շրջանը հանդիսացել է ֆեոդալիզմ, և 3. Արտաշեսյան շրջանը հանդիսացել է տոհմատիրությունից ֆեոդալիզմին անցնելու շրջան։

Ստրկատիրությունը հին Հայաստանում գոյություն ունենալու հարցն

---

[1] „История ВКП(б). Краткий курс, Москва, 1938 стр. 113.

[2] *Струве*, История древнего Востока, М-ва, 1941 г., стр. 320.

առաջին անդամ առաջ է քաշել Բորյանը։ Նա ելնելով ֆորմացիաների հաջորդականության ընդհանուր սխեմայից, դանում է, որ «հին պետությունների համար ստրկական ինստիտուտը հասարակական կյանքի զարգացման անհրաժեշտ աստիճանն էր և չի կարելի պատկերացնել հին աշխարհի կուլտուրական զարգացումը առանց այդ ինստիտուտի։ Հայաստանը, նրա սխեմայով, ապրել է ստրկության շրջանը։

Ստրկատիրությունը, որպես իշխող ֆորմացիա հին Հայաստանում, որոշակի դրված է ՍՍՌՄ ժողովուրդների պատմության բուհական դասընթացում։ Այնտեղ, «Ստրկատիրական տնտեսությունը հին Հայաստանում» վերնագիրը կրող հատվածում, շեշտված է, որ «Տիգրան Բ-ի ժամանակ Հայաստանում գերիշխում էր ստրկատիրական տնտեսությունը»։[2]

Վերջերս, պրոֆ. Ա. Իոնիսիանն ես, հայոց պատմության միջնակարգ դպրոցների ձեռնարկի առթիվ գրված իր գրախոսականում, հայոց պատմության հին շրջանը համարում է ստրկատիրական. «Անտիկ Հայաստանում,—գրում է նա,—ստրկատիրական հասարակություն էր, ինչպես և անտիկ Բարթիայում ե հին Կոլխիդայում»։[3]

Արտաշեսյան հարստության շրջանում ֆեոդալական հարաբերությունների իշխողը հանդիսանալու տեսակետը որոշակի դրել է պրոֆ. Ն. Ադոնցը, որին և հետևել են մի շարք այլ հայագետներ։ Նա իր „Армения в эпоху Юстиниана" աշխատության մեջ, գտնում է, որ Զարեհի ե Արտաշեսի շրջանում նախնադարյան հասարակությունն սկսեց ճեղքեր տալ և առաջացան ֆեոդալական-նախարարական կարգեր։ Եվ այդ պրոցեսը, նրա կարծիքով, «ավարտվեց Տիգրան Մեծի փոթորկոտ էպոխայում»։[4]

Ակադ. Հ. Մանանդյանն իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ ընդունում է պրոֆ. Ն. Ադոնցի այս հիմնական եզրակացությունը, սակայն մի վերապահությամբ, որ ինքը ֆեոդալիզմի սկզբնավորությունն ավելի հին շրջան է տանում. «Տոհմային ձևերի բեկումը,—գրում է նա,—և դասերի ու ֆեոդալիզմի ծագումը հին Հայաստանում պետք է դնել ոչ թե Արտաշեսի, Զարեհի և Տիգրան Մեծի ժամանակ, ինչպես այդ ենթադրել է Ադոնցը, այլ նախորդ ավելի հնագույն շրջանում»։[5]

Երրորդ տեսակետը, Արտաշեսյան շրջանը նախնադարյան համայնական հասարակությունից ֆեոդալիզմի անցման շրջան համարելու տեսակետը, առաջ է քաշված վերջերս ակադ. Գրեկովի կողմից։ Նա իր մի հոդվածում[6] զարգացրել է մոտավորապես հետևյալ միտքը։—Հռոմեական կայսրության դռները բախող և հետագայում նրան կործանող գերմանացիները, սկյութները և սլավոնները գտնվել են տոհմատիրությունից ֆեոդալիզմին անցնելու շրջանում, որին էնգելսը «ռազմական դեմոկրատիա» անունն է տալիս։

---

[1] *Боян*, Армения, международная дипломатия и СССР, ч. I.

[2] История СССР, том I, М-ва 1939 г., стр. 32.

[3] *А. Нонисиани* հանս նրա գրախոսականը միջնակարգ դպրոցի դասագրքի առթիվ „Советская книга" ամսագրում 1946 թ. № 6—7)։

[4] *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, СПБ 1908 г., стр. 410.

[5] Հ. Մանանդյան, *Ֆեոդալիզմը հին Հայաստանում, 1934, Երևան էջ 251.*

[6] *Б. Д. Греков*, Спорные вопросы периодизации истории народов СССР (տես „Учительская газета" 1940 թ., 29/XII).

Անցման այդպիսի շրջանում է գտնվել և Հայաստանը։ Հայաստանում հասարակական կարգերը երկարակյաց են եղել, ինչպես ռուսական համայնքն է։ Ստրուկների գրությունը հին Հայաստանում եղել է ճիշտ այնպես, ինչպես սլավոնների մոտ է։ «Տիգրան Մեծին,—նրա կարծիքով—կարելի է համեմատել կարլոս Մեծի կամ մեր Վլադիմիրի ու Յարոսլավ Մուդրու հետ։[1] Բարբարոսական թագավորությունը գերմանացիների մոտ բարձր զարգացման շրջան ապրեց VIII դարում, Ռուսաստանում Վլադիմիրի և Յարոսլավի ժամանակ (X—XI դ. դ.), իսկ Հայաստանում՝ Տիգրան Մեծի ժամանակ։ Եվ ակադ. Գրեկովն անհրաժեշտ է գտնում վերանայել միջնադարի վերաբերյալ քաղաքացիություն գտած կոնցեպցիան. «Մենք կանգնած ենք մեր սովորական պատմական պատկերացումները վերանայելու անհրաժեշտության առաջ,—գրում է նա։—Միջին դարերը Կովկասում սկսվում են ավելի վաղ, քան այդ Եվրոպայում էր։[2]

Սակայն իր հոդվածի վերջում, Գրեկովը ամփոփելով հին Հայաստանը անցման շրջան համարելու իր կոնցեպցիան, զգուշացնում է, որ՝ «Ես համարձակություն չեմ վերցնում ինձ վրա պնդելու, որ այդ այդպես է (այսինքն, որ Տիգրանի շրջանը ռազմական դեմոկրատիայի շրջան է. Ա. Ա), բայց այդ հարցի վերաբերյալ բոլոր հնարավոր ենթադրություններից ինձ ամենից հավանական ենթադրությունն այդ է թվում։[3]

Ակադ. Հ. Մանանդյանը իր մի հոդվածում հարում է ակադ. Գրեկովին և դանում, որ Գրեկովի այդ տեսակետն ընդունելի է։ Նա նոր ուսումնասիրությամբ պարզում է, որ «Տիգրանյան Հայաստանում մենք գտնում ենք տվյալներ ոչ թե Հայաստանի ստրկատիրական կարգերի մասին, այլ միայն այնպիսի գծերի, որոնք հատուկ են միջնադարյան բարբարոսական պետություններին։[4]

Մեր նպատակից դուրս է Արտաշեսյան և նրան նախորդող շրջանի հասարակա-անտեսական ֆորմացիայի մասին, ընդհանրապես, խոսելը, սակայն, քանի որ հնարավոր չէ առանց այդ շրջանի հասարակական հարաբերությունների պարզ պատկերը տալու պերիոդիզացիայի հարցը լուծել, ուստի անհրաժեշտ ենք համարում մասամբ շեղվել մեր բուն թեմայից և մի քանի խոսք ասել նշված հարցի մասին։

Արտաշեսյան հարստության շրջանը ֆեոդալիզմի շրջան համարել, մեր կարծիքով, հիմնավորված չէ։ Այդ տեսակետի կողմնակիցներից ոչ մեկը չի կարող բերել պատմական համոզիչ ոչ մի փաստ, որը ապացուցեր ֆեոդալիզմի գոյությունը Արտաշեսյան շրջանում։ Այս տեսակետի կողմնակիցները փաստերը սովորաբար վերցնում են հայկական մատենագրերից, գլխավորապես Ստեփանոս Օրբելյանից և Մխիթար Գոշի Դատաստանագրքից, մոռանալով, որ Արտաշեսյան շրջանից մինչև X—XII դարերը Հայաստանի հասարակական կյանքն արմատապես փոխվել էր, և միջնադարի մեր պատմիչները խոսելով հին շրջանի մասին, ներկայացնում են այն ժամանակակից ձևով։ Մեր կարծիքով, Արտաշեսյան դինաստիայի ժամա-

[1] Նույն հոդվածը։
[2] Տես Գրեկովի նշված աշխատությունը։
[3] Նույնը։
[4] *Я. А. Манандян*, Проблема общественного строя доаршакидской Армении (տես „Исторические записки" № 15 за 1945 г., стр. 27).

նակաշրջանից մինչև XII—XIII դարերը փոխվել էին ոչ միայն սոցիալ-անտեսական հարաբերությունները, այլև սոցիալական իմաստ արտահայտող տերմինները։ Եվ Հայաստանի մասին սկզբնաղբյուրների տեղեկությունները քննելիս՝ մենք այս կամ այն տերմինին չպիտի մոտենանք միայն միջնադարյան իմաստով, այլ նրանք պիտի քննենք իր ժամանակի իմաստով։

Հաճախ միևնույն տերմինը ոչ միայն տարբեր ժամանակներում, այլև նույն ժամանակում տարբեր իմաստ է ունեցել։ Օրինակ՝ հունական δοῦλος բառը V դարում սովորաբար թարգմանվել է «տարուկ» տերմինով։ Այսպես՝ «Եղիցի քեզ ստրուկ յաւիտեան» («ἔσται σοι δοῦλος εἰς τὸν αἰῶνα»)։[1] Իսկ դրան հակառակ, որոշ հատվածներում, այն թարգմանվել է «ծառայ» տերմինով՝ «Παῦλος καὶ Τιμόθεος, δοῦλοι τοῦ Ἰησοῦ Χριστοῦ» «Պաւղոս և Տիմոթէոս ծառայք Յիսուսի Քրիստոսի»։[2]

Կամ վերցնենք «ժշակ» տերմինը։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կարծիքով՝ «ժշակ» բառն ունի «շինական» իմաստը։[3] Մեծ մասամբ այդ իմաստով էլ իրոք որ գործ է ածվում մեր հին մատենագրության մեջ։ Բայց այդ բառն ունի և տարուկ իմաստը, օրինակ՝ Ղազար Փարպեցու[4] և Եղիշեի՝[5] մոտ՝ Արրահամ Խոսրովանոցի և Խորեն Երեցի գերությունը վերաբերող հատվածում։ Փարսիկները կարում են Արրահամ Խոսրովանոցի ու Խորեն Երեցի ակոնները և նրանց, որպես տարուկների, ուղարկում են հարավային շրջանները։ Նրանց տարուկ լինելն անվիճելի է, սակայն Եղիշեի և Ղազար Փարպեցու մոտ հիշված են «ժշակ» տերմինով։

Եթե նույն բառը նույն ժամանակ տարբեր իմաստ ունի, ապա ինչքան տարբեր կարող է լինել նույն տերմինի իմաստը տարբեր ժամանակներում։ Նույն տերմինը մի՞թե կարող էր միևնույն իմաստն ունենալ նախքան մեր թվականության առաջին դարում և մեր թվականության XIII դարում։

Հայագիտության մեջ, մեր կարծիքով, հիշա չէ բացատրվել նաև գերեվարության նպատակը հին Հայաստանում։ Մինչև այժմ գերիչները հանդիսանում այն տեսակետը, որ իբր հին Հայաստանի թագավորները գերի են բերել գլխավորապես առևտրականներ և արհեստավորներ՝ Հայաստանը զարգացնելու նպատակով։ Սակայն այս տեսակետը սկզբնաղբյուրներով չի հաստատվում։ Բերենք մի քանի փաստեր։—

Սարգոնը խոսելով Տիգրան Մեծի գերեվարության մասին, հետևյալն և պատմում։

„Ἦσαν δ᾽ ἐν αὐτῇ πολλοὶ μὲν Ἕλληνες τῶν ἀναστάτων ἐκ Κιλικίας, πολλοὶ δὲ βάρβαροι τοῖς Ἕλλησιν ὅμοια ἐπονθότες, Ἀδιαβηνοὶ καὶ Ἀσσύριοι καὶ Γορο-

«Այս քաղաքում (այսինքն Տիգրանակերտում—Ա. Ա.) կային շատ հելլեններ, ինչպես նաև բարբարոսներ՝ հելլեններին նմանապես տառապողներ, Ադիաբենացիներ և Ասորիներ և Գորոնացիներ

[1] Բ. օրէնք, ԺԵ, 17։
[2] Բ-ուղթ առ Փիլիպէացիս. 16, 1։
[3] Հ. Մանանդյան, Նոր-գրականն հին Հայաստանում, էջ 149—153։
[4] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1909, էջ 230—231։
[5] Եղիշէի վարդապետի Պատմութիւն Վարդանանց, Վենետիկ 1864, էջ 237։

υηνοι καὶ Καππάδοκες, ὧν κατασκάψας τας πατρίδας, αὐτοῦ δὲ κομίσας ἐκεῖ κατοικεῖν ἠνάγκασεν„

տակից բարբարոս արաբներ և ասորիներ, կորդվացիներ և կապադովկիացիներ, որոնց հայրենիքը քանդել և այնտեղից գաղթեցրել էր [Տիգրան Մեծը]»։

Ստրաբոնի այս տեղեկությունը, կարծում ենք, միանգամայն հերքում է ղեկավարության նպատակը առևտրականներ և արհեստավորներ տեսնելու սիրալ տեսությունը։ Այստեղ, նախ՝ շատ որոշակի ասված է բոլոր բնակիչների մասին։ Ապա՝ հույների հետ Պլուտարքոսը հիշում է մի շարք «բարբարոս» ժողովուրդների՝ աղիաբենցիների, կորդիացիների, ասորիների և այլ ժողովուրդների, որոնց առևտրականներ և արհեստավոր լինելու մասին խոսք լինել չի կարող։

Պլուտարքոսի մոտ կան տեղեկություններ, որ Տիգրան Մեծը տեղահան է արել և գերի բերել վրանաբնակ արաբների։ Պլուտարքոսը այդ մասին գրում է.

«Νεοι δ' ἐξ ἠθων καὶ Ἄραβας τους Σκηνίτας μεταγαγων".[1]

«Նրանց հետ (այսինքն՝ այլ գաղթականների հետ — Ա. Ա.) քշեց (Տիգրան Մեծը) իրենց բնակավայրերից վրանաբնակ արաբներին»։

Հույն պատմիչներից Ապպիանոսը Տիգրան Բ-ի վերցրած գերիների թիվը հաշվում է 300,000։[2] Հին հայկական թագավորների կողմից Հայաստան բերված մեծ թվով գերիների մասին հիշում են նաև մի շարք հայ պատմիչներ՝ Փավստոսը, Լազարը, Եղիշեն և Մովսես Խորենացին։ Հարց է առաջ գալիս՝ կարելի՞ է արդյոք ենթադրել այդպիսի թվով արհեստավորների և առևտրականների առկայությունը հին Հայաստանում։ Դժբախտաբար, այս հարցը երբեք իրենց առջև չեն դրել գերիներին առևտրականներ ու արհեստավորներ համարող պատմաբանները։

Հին Հայաստանը, ճիշտ է, իր ժամանակի զարգացած երկրներից մեկն էր, այնտեղ կային մեծ թվով առևտրականներ և արհեստավորներ, որոնք ակտիվ մասնակցում էին Արևմուտքից դեպի Հնդկաստան կատարվող տարանցիկ առևտրին, բայց անժխտելի կլիներ պնդել, որ Հայաստանի քաղաքներում հարյուր հազարների հասնող առևտրականներ ու արհեստավորներ կային։ Անգամ այժմ այդքան առևտրականներ չկան ամենազարգացած արդյունաբերական երկրների քաղաքներում, ճիշտ չէ նաև Հայաստանն ինչ-որ բարբարոս մի երկիր պատկերելը, որ, իբր ոչ տեղացի արհեստավորներ կային, ոչ տեղացի առևտրականներ, և հայ թագավորները կարիք էին զգում նրանց դրսից բերել և Հայաստանը «հելլենականացնել»(!)։

Հայաստան բերված գերիների մասին մի հետաքրքիր տեղեկություն է գտնվել Պլուտարքոսի մոտ։ Նա պատմում է այն մասին, որ երբ (69 թ. մ. թ. ա.) Լուկուլլոսը, հռոմեական լեգեոնների գլուխ կանգնած, արշավեց

[1] Plout (Փարիզի 1887 թ. հրատ.), էջ 603։
[2] App. Mithr., էջ 84։

Տիգրան Բ-ի վրա և վերցրեց Տիգրանակերտը, Տիգրանի բերած գերիներին ազատեց և ճանապարհածախս տալով՝ իրենց անները ուղարկեց։

Τοὺς δ' Ἕλληνας εἰς τὰς αὐτῶν πατρίδας ἔπεμψε, προσθεὶς ἐφοδια, καὶ τῶν βαρβάρων ὁμοίως τοὺς ἠναγκασμένους κατοικεῖν".[1]

«Հույներին նա (Լուկուլլոսը. Ա. Ա.) ճանապարհածախս տվեց և ուղարկեց իրենց տները։ Նույն ձևով նա վարվող ուժով դաղթեցրած տեղացիների հետ։

Հարց է առաջանում՝ ինչպիսի՞ առևտրականներ ու արհեստավորներ էին, որ անգամ նյութական հնարավորություն չունեին իրենց հայրենիքը վերադառնալու ու Լուկուլլոսն է նրանց ճանապարհածախս տալիս, որ նրանք վերադառնան։ Պարզ է, որ Տիգրանակերտից հեռացող նախկին գերիները, ըստ այս տեղեկության, ոչ թե առևտրականներ կամ արհեստավորներ էին, այլ նյութական հնարավորություններից զուրկ անազատ բնակիչներ։ Այստեղ խոսքը բացառությունների մասին չէ և ոչ էլ վիրցրած գերիներին առևտրական նպատակների բանեցնելու, այլ գերեվարության հիմնական նպատակի։

Որ իրոք հին Հայաստանում գերի բերված թշնամիները ստրուկների էին վերածվում, այդ մասին վկայություններ են պահվել VII դարի հայ նշանավոր գիտնական Անանիա Շիրակացու և V դարի պատմիչ Փավստոս Բյուզանդացու մոտ, բայց այդ վկայությունները մենք այստեղ հնարավորություն չունենք մեջ բերել։ Գերեվարության այս փաստով մենք նպատակ չունենք ստրկատիրական հասարակության գոյությունը հաստատել Հայաստանում, սակայն նրա օգտագործման նպատակը պարզելը կարևոր է ֆորմացիայի հարցը պարզելու համար։

Ստրկատիրությունը Հայաստանում մխտել ցանկացող գիտնականները, սովորաբար, մատնացույց են անում Քսենոֆոնտի «Անաբազիս» աշխատության մեջ Հայաստանի ներքին կյանքի մասին հիշված տեղեկությունները։ Մեր կարծիքով՝ մատնացույց արված փաստերը տեղին չեն։ Նախ՝ Քսենոֆոնտի անցման ժամանակ դեռ չէր ավարտված հայ ժողովրդի ձևավորումը, նա գտնվում էր դեռևս ձևավորման պրոցեսում միայն։ Ապա՝ Քսենոֆոնտի մոտ հիշված արմենները հայ էթնոսի կազմի մեջ մտնող առանձին ցեղա-տոհմային միավորումներից մեկն էին հանդիսանում միայն։ Եվ, վերջապես, Քսենոֆոնտի ճանապարհից դուրս են մնացած եղել Հայաստանի վեր զարգացած շրջանները, որոնք հատկապես խոշոր դեր էին կատարել Ուրարտական ռազմա-ստրկատիրական հասարակության շրջանում։

Եթե ընդունելու լինենք, որ Արտաշեսյան հարստությունը նախնադարյան համայնական հասարակության քայքայման վրա առաջացած ֆեոդալական հասարակություն էր, ապա պիտի կատարենք և տրամաբանական երկրորդ քայլը, այն է՝ Ուրարտական ստրկատիրական հասարակությունից հետո մեր պատմությունը ենթարկվեց ռեգրեսի, հետադարձ զարգացման ստրկատիրությունից նորից դեպի համայնական հասարակություն և Արտաշեսյան հարստության շրջանում տոհմատիրական հասարակության երկրորդ արոհումից առաջացավ երկրորդ դասակարգային հասարակությունը, բայց այս անգամ ոչ թե ստրկատիրական հասարակության, այլ ավելի

[1] Plut., էջ 611։

բարձր զարգացման՝ ֆեոդալական հասարակության ձևով։ Ցանկանում ենք այդ եզրակացությունն անել, թե ոչ, այդ միևնույն է, նա առաջանում է անկախ մեր ցանկությունից։ Եթե մենք Ուրարտուի պատմությունը դիտում ենք որպես հայ ժողովրդի պատմության օրգանական մի մասը, այն դեպքում մենք պիտի հետևողական լինենք և մեր տրամաբանության մեջ։

Եվ, վերջապես, Արտաշեսյան և նրա նախորդ շրջանի մասին խոսելիս՝ Հայաստանը չպետք է կտրենք իր շրջապատից։ Ի՞նչ շրջանում հանդես եկավ նա և ինչ հասարակական զարգացում ունեցող երկրներով էր շրջապատված։ Հայաստանի արևմտյան հարևանները հոռոմայեցիներն էին, որոնց մոտ գերիշխում էր ստրկատիրությունը։ Այս մասին վեճ լինել չի կարող։ Հայաստանի հարավային հարևանը Պարսկաստանն էր, որը գտնվում էր նույնպես ստրկատիրական հասարակության շրջանում[1]։ Հայաստանի հյուսիսային հարևանը Վրաստանն էր, որ դարձյալ գտնվում էր ստրկատիրական հասարակության շրջանում։[2] Հնարավոր էր արդյոք, որ ստրկատիրական հասարակության այս շրջապատի մեջ Հայաստանը միայն հանդես գար ֆեոդալական հասարակության ձևով։

Մեր կարծիքով, Արտաշեսյան և նրա նախորդ շրջանում ֆեոդալիզմ ընդունող տեսությունը պիտի վերջնականապես մերժվի և այդ շրջանը կամ մենք պիտի ընդունենք ստրկատիրական հասարակություն, կամ ընդունենք ակադ. Դրեկովի առաջ քաշած տեսությունը—անցման շրջանի հասարակություն՝ շեշտելով, սակայն ստրկական ուկլադի մեծ կշիռը։ Համենայն դեպս, այս վերջին տեսակետներից որն էլ մենք ընդունելու լինենք, Արտաշեսյան և նրա նախորդ շրջանը հնարավոր կլինի մտցնել հայոց պատմության հին շրջանի մեջ։

Այս հարցը նման ձևով լուծելու պարագայում ևս վիճելի է մնում սակայն, հայոց պատմության հին շրջանի և միջին դարերի սահմանազատումը։ Արտաշեսյան հարստությունը վերջանում է մեր դարաշրջանի սկզբում։ Այնուհետև Հայաստանը գտնվում է Պարսկաստանի և Հռոմի մրցակցության ցանցում մինչև 66 թվականը, իսկ Արշակունիների շրջանում, արդեն պարզված է, ֆեոդալիզմի շրջան է հանդիսանում։ Մոտ կես դար կազմող այս շրջանը ևս, մեր կարծիքով, կարելի է մտցնել հայոց պատմության հին շրջանի մեջ, իսկ Արշակունիների սկզբից դնել արդեն միջին դարերը։

Մենք այստեղ որոշ շեղում ենք կատարում ընդհանուր պատմության պերիոդիզացիայից, որովհետև այնտեղ հին շրջանի վերջը և միջին դարի սկիզբը գրվում է V դարում։ Սակայն այլ կերպ վարվել չենք կարող։ Աքևելյան որոշ երկրներ ունեցել են իրենց առանձնահատկությունները և չի կարելի այդ հաշվի չառնել։ Վրացագետ ընկերները հին շրջանը հասցնում են մինչև VII դարը, որը բխում է իրենց պատմության առանձնահատկություններից։

Անհրաժեշտ է նշել, որ հին հասարակության անկման և նոր հասա-

---

[1] Այս մասին տես Մարուվեի աշխատությունը „История древнего Востока" և Բելյայեվի դասախոսությունը „Иран в средние века (стенограмма, прочитанных в Высшей парт. школе ЦК ВКП(б) в 1940—41 уч. году лекций).

[2] Այս մասին տես Ջանաշիայի խմբագրությամբ լույս տեսած „История Грузии", Тбилиси, 1945 г., стр. 39—128.

բակության անցնելու այս շրջանում հատուկ են որոշ ցնցումներ. ինչպես նշել են մարքսիզմի կլասիկները։ Այսպիսի ցնցումներ նկատվում են և մեզ մոտ, Արտաշեսյան և Արշակունյաց հարստության միջև ընկած շրջանում, որի քաղաքական դրությունը մինչ այն աստիճանի հեղհեղուկ է եղել, որ դասընթաց կազմողները, սովորաբար, այդ շրջանն անվանել են «խառը շրջան», «խառնաշփոթ շրջան»։ Ճիշտ է, սկզբնաղբյուրները հնարավորություն չեն տալիս այդ ցնցումները տեսնել իրենց պարզության մեջ, սակայն նրանք եղել են և դա անվիճելի է։

Այսպիսով, հայոց պատմության հին շրջանն սկսվում է նախնադարյան հասարակությունից և վերջանում Արտաշեսյան հասարակության շրջանով։ Հին շրջանի մեջ, մեր կարծիքով, անհրաժեշտ է մտցնել հետևյալ դլխավոր թեմաները՝ 1. Նախնադարյան համայնական հասարակությունը Հայաստանում, 2. Հայաստանի նախաբնիկները և նրանց պետությունները, 3. Հայ ժողովրդի կազմավորումը, 4. Հայաստանը մեղական, Աքեմենյան և Սելևկյան զերիշխանության տակ, 5. Հայաստանը Արտաշեսյան հարստության շրջանում, 6. Հասարակական-տնտեսական հարաբերությունները հին Հայաստանում և 7. Հին հայկական կուլտուրան։

Բավականաչափ երկար մի շրջան է հանդիսանում հայոց պատմության միջին դարերը Արշակունյաց շրջանից մինչև XIX դարը։ Անհրաժեշտ է այս ժամանակաշրջանը ևս բաժանել ըստ ենթաշրջանների։

Մեր կարծիքով, հայոց պատմության միջին դարերը կարելի է բաժանել երեք շրջանի—ա) վաղ ֆեոդալիզմի շրջան, բ) ֆեոդալական հարաբերությունների զարգացման շրջան և գ) ֆեոդալիզմի ձևափոխման և քայքայման շրջան։

Պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ այս էպոխաներից յուրաքանչյուրի ժամանակագրական շրջանակները պիտի գծել հետևյալ ձևով։—Արշակունյաց թագավորության սկզբից մինչև Բագրատունիները—վաղ ֆեոդալիզմի շրջան, Բագրատունյաց թագավորության սկզբից մինչև XII դար—ֆեոդալական հարաբերությունների զարգացման շրջան XIII դարից մինչև XIX դարը —ֆեոդալական հարաբերությունների ձևափոխման և քայքայման շրջան։

Վաղ ֆեոդալիզմի շրջանի մեջ պիտի մտնեն հետևյալ թեմաները՝ 1. Արշակունյաց հարստության հիմնումը և ամրացումը, 2. Քրիստոնեության մուտքը, 3. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարսկաստանի դեմ իր անկախության համար IV դարում, 4. Հայկական գրի և գրականության ստեղծումը, 5. Արշակունյաց անկումը և Արևելյան Հայաստանի վերածվելը մարզպանության, 6. Ժողովրդա-ազատագրական շարժումները Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի դեմ, 7. Հայաստանի նվաճումը խալիֆաթի կողմից և վերջինիս հաստատվելը, 8. Գյուղացիական շարժումները VII—VIII դարերում, 9. Հայկական կուլտուրան V—VIII դարերում։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման շրջանի մեջ պիտի նշել հետևյալ թեմաները. 1. Բագրատունյաց հարստության հիմնումը և նրանց պայքարը քաղաքական միասնության համար, 2. Տնտեսական կյանքի աշխուժացումը Բագրատունյաց շրջանում, 3. Թոնդրակացիների շարժումը, 4. Հայաստանը Բագրատունյաց անկման շրջանում, 5. Հայաստանը

սելջուկյան գերիշխանության տակ, 6. Հայկական կուլտուրան IX—X դարերում։

Ֆեոդալական հարաբերությունների ձևափոխման և քայքայման շրջանի մեջ պիտի մտնել հետևյալ թեմաները. 1. Հայաստանը մոնղոլական գերիշխանության տակ, 2. Կիլիկյան հայ թագավորությունը, 3. Հայաստանը Լենկ-Թեմուրի և նրա հաջորդների շրջանում, 4. Հայաստանը Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Տաճկաստանի մրցակցության ցանցում, 5. Ազատագրական շարժումները XVII—XVIII դարերում։

Անհամեմատ ավելի դյուրին է որոշել հայ ժողովրդի պատմության միջին դարերի և նոր շրջանի սահմանը։ Անվիճելի է, որ հայ ժողովրդի պատմության վերջին շրջանը սերտորեն կապված է եղել ռուսաց պատմության հետ։ Նա իր զարգացման ընթացքով ու աստիճանով չունի այնպիսի բնորոշ առանձնահատկություններ, որ նրա պերիոդիզացիան կատարենք տարբեր ձևով։ ՍՍՌՄ ժողովուրդների պատմության նոր շրջանի սահմանագիծն է համարվում XVIII դարի վերջերը, XIX դարի սկզբները։ Այսպես են կազմված ՍՍՌՄ ժողովուրդների պատմության Բուհական դասընթացները և ծրագրերը։ Այս նույն ժամանակն էլ, մեր կարծիքով, պիտի դնել հայոց պատմության միջին դարերի վախճանը և նոր պատմության սկիզբը։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս նույն շրջանի հետ է կապված հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող մի խոշոր իրադարձություն—ազատագրական շարժման բուռն վերելքը, որը հատուկ է սովորաբար անցման շրջաններին։ Այս շարժումներն սկզբում նախապատրաստեցին Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական ու տաճկական լծից և դրանով իսկ հնարավորություն ստեղծեցին հայ ժողովրդի համար, որ նա իր բախտը կապի ռուս մեծ և ազնիվ ժողովրդի բախտի հետ։

Միանգամայն պարզ է նորագույն պատմության պերիոդիզացիան։ Այդ կապված է Սոցիալիստական Ռևոլուցիայի հաղթանակի, սովետական կարգերի հաստատման, Սաալինյան Մեծ էպոխայի հետ։

Ահա մոտավորապես այն հարցերը, որոնց վրա մենք անհրաժեշտ համարեցինք կանգ առնել։

Այսպիսով, հայոց պատմության պերիոդիզացիան, ըստ մեր վերև բերված փաստարկումների, պիտի սահմանվեր հետևյալ ձևով. ա) Հին շրջանը—նախնական համայնական հասարակության շրջանից մինչև մեր թվականության առաջին դարի կեսերը, բ) Միջին դարերը—մեր թվականության առաջին դարի կեսերից մինչև XVIII դարը ներառյալ, գ) Նոր շրջանը—XIX դարի սկզբից մինչև սովետական կարգերի հաստատվելը և դ) Նորագույն շրջան—սովետական ժամանակաշրջանը։

Մենք, իհարկե, հավակնություն չունենք պնդելու, որ առաջադրված բոլոր հարցերը մեզ հաջողվել է լուծել և նրանց դեմ չի կարելի վիճել։ Ավելի ճիշտ կլինի ասել, որ մենք համարձակություն ենք վերցրել մեղ վրա դնելու հարցերը։ Մենք կասկածում, որ մեր մասնագետ ընկերների բաբյացակամ և գործարար մտքերի փոխանակությունը հնարավորություն կտա մի ընդհանուր եզրակացության գալ և հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիան իրոք դնել մարքսիստական գիտական հողի վրա։